

Կատրի Ռայլ

Փիլիսոփայության դոկտոր

Տարտուի համալսարանի Նարվայի քոլեջի տնօրեն

**ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ԷՍՏՈՆԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Էստոնիայի հանրային դպրոցներում ուսուցման հիմնական լեզուն պետական լեզուն է՝ էստոներենը, թեպետ, հանրային դպրոցների շուրջ մեկ հինգերորդը ռուսալեզու է: Պետական լեզվի հետ մեկտեղ, էստոնիայի որոշ հանրային դպրոցներում, որպես ուսուցման լեզու, օգտագործվում են ռուսերենը, անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը և ֆիններենը:

Այսօրվա դրությամբ, Կրթության և հետազոտման նախարարության տվյալների համաձայն, միջնակարգ աստիճանում դպրոցների 90%-ում 4 կամ ավելի առարկա է դասավանդվում էստոներեն, միննույն ժամանակ, յուրաքանչյուր դպրոց միջնակարգ աստիճանում աշխատում է առարկաների 60%-ը դասավանդել լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցման մեթոդով:

Ընթացիկ մեծ փոփոխությունների գործընթացում կարևոր է, որ ինչպես պետության, այնպես էլ դպրոցների կողմից մեծ ուշադրություն տրամադրվի մայրենի լեզվի պահպանմանը և զարգացմանը:

Մինչև օրս երկլեզու կրթությունը հիմնականում միայն ռուսական դպրոցներում էր, այժմ իրավիճակը փոխվում է: 2010 թվականի Ազգային ուսումնական պլանը բոլորին միատեսակ պարտավորեցնում է դպրոցում ստեղծել բազմամշակույթ ուսումնական գործընթաց և կիրառել լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցում:

Միջազգային հետազոտությունները ցույց են տվել, որ բոլոր դպրոցներին միատեսակ հաջողություն է բերում բազմամշակույթ միջավայրի ստեղծումը դասի գործընթացում և լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցումը:

Կրթության ստանալն այն լեզվով, որը աշակերտների համար մայրենի չէ, էստոնիայում սկսվել է 1960-ական թվականների սկզբից: Սկզբում ուսուցման լեզուն, բացի մայրենիից, անգլերենն էր: Դպրոցները, որտեղ կիսաանգլերեն ուսուցում էր, և այն ժամանակ, և այսօր էստոնիայում համարվում են էլիտար: Այսօր էստոնիայի հանրային դպրոցների

հիմնական ուսուցման լեզուն էստոներենն է, միննույն ժամանակ հանրային դպրոցների շուրջ մեկ հինգերորդը ռուսալեզու է, քանի որ ռուսալեզու էթնիկական փոքրամասնությունները էստոնիայի ընդհանուր բնակչության 30%-ն են կազմում: Ռուսալեզու դպրոցները հիմնականում գտնվում են Տալլինում և երկրի հյուսիսային մասում, որտեղ բնակչության

մեծ մասը ռուսալեզու է: Բացի անգլերեն և ռուսերեն լեզուներից, որպես ուսուցման լեզու, Էստոնիայի որոշ հանրային դպրոցներում պետական լեզվի հետ մեկտեղ օգտագործվում են նաև ֆրանսերենը, գերմաներենը և ֆիններենը: Յուրաքանչյուր չորրորդ ռուսալեզու աշակերտ, որը ծագումով ռուս ազգության չէ, նախկին Խորհրդային Միության կազմում ապրող էթնիկական խմբերին է պատկանում և այսօրվա դրությամբ սովորում է Էստոնական դպրոցներում կամ այնպիսի դպրոցներում, որտեղ առավելապես Էստոներենով են ընթանում իմերսիոն ծրագրերը: Այստեղից ելնելով՝ բոլոր ուսուցիչները, անկախ նրանից, թե ինչ տիպի դպրոցներում են դասավանդում, կանգնած են մարտահրավերի առջև, որ տիրապետեն ուսուցման լեզվին և պետական լեզվին, նաև հեշտությամբ պետք է հարմարվեն բազմալեզու միջավայրում, ծանոթ լինեն և ինտեգրված ուսուցման մեթոդաբանությանը, կիրառեն ինտեգրված ուսուցման մեթոդաբանությունը: Վերոնշյալ մարտահրավերներն իրենց արտացոլումն են գտնում երկրի իրավական ակտերում, կադապար փաստաթղթերում և նաև զարգացման ակտերում: Օրենքը լեզվի մասին ցանկացած դիրքում աշխատող մարդուն բարձրագույն կրթության հետ մեկտեղ պարտավորեցնում է B2 մակարդակին համապատասխան Էստոներեն լեզվի հավաստագիր ունենալ, սա տարածվում է նաև ուսուցիչների վրա, իսկ Էստոներեն լեզվի յուրաքանչյուր ուսուցչի համար պարտադիր է ունենալ C1 մակարդակը հավաստող համապատասխան փաստաթուղթ: Ուսուցչի մասնագիտական չափորոշչում ընդգծված է բազմաձևակության ուսումնական միջավայրի գոյության ապահովումը: Ուսուցիչը ուսուցման ընթացքում պարտավոր է նկատի ունենալ յուրաքանչյուր աշակերտի տարբերվող լեզվական և

մշակութային բեզբաունդները: Բացի դրանից, յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա պարտավորություն, որ իր տեսակետը Էստոնիայի պատմության և մշակույթի մասին, Եվրոպայի և աշխարհի նկատմամբ չփաթաթել աշակերտների վզին, որպեսզի չառաջանա պատենշ ազգային նույնականության և հասարակության հոգևոր արժեքների միջև (Ուսուցչի մասնագիտական չափորոշիչ V, 2005): Էստոնական ինտեգրման ռազմավարության մեջ մինչև 2013 թվականը կսահմանվի ուսուցչի դերը, որպես նրա վերաբերմունքների և արժեքների ձևավորում և տարբերվող մշակույթի նկատմամբ դրական վերաբերմունքի աճ: (Պետական ռազմավարության ծրագիր 2008-2013 թվականների համար): Ուսուցիչների կրթության ռազմավարություններում մինչև 2013 թվականը պարտադիր կդառնա դասընթացը օտար լեզվի դասավանդման մեթոդիկայից բոլոր ուսանողների, ապագա մանկավարժների համար: Կարևոր է պետական մակարդակով, որ առարկայի ապագա ուսուցիչն անցնի մանկավարժական պրակտիկա տարբեր տիպի կրթական հաստատություններում, որտեղ ուսուցման լեզուն ուսանողների համար մայրենի լեզուն չէ (Էստոնիայի ուսուցչի կրթական ռազմավարություն 2009-2013 թվականների համար): Նոր Ազգային ուսումնական պլանն ընդունվել է 2010 թվականին, որում կարևոր են լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցման մեթոդները (Ազգային ուսումնական պլաններ հիմնական և միջնական դպրոցների համար, 2010):

Ժամանակակից Էստոնիայում «Լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցման» (content and language integrated learning) հասկացության տակ ժողովուրդը ենթադրում է մեթոդաբանություն, որն ապահովում է միաժամանակ բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցման հետևանքով որոշակի ուսուցման կարողությունների զարգացում:

(Mehisto, P. & Marsh, D.,2008): Էստոնիայի ռուսական դպրոցները (Russian-medium) առաջատար են լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցման ներդրման մեջ: Մոտավորապես 10 տարի առաջ, Կանադայի օրինակի նախատեսմամբ, սկսվեց «Լեզվական իմերսիայի» ծրագրի իրականացումը, որը կամավոր էր ռուսալեզու դպրոցների համար, և որը նախատեսում էր լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցում: Իմերսիայի նպատակը կայանում է հետևյալում՝ աշակերտները ձեռք կբերեն հավասար կարողություններ ինչպես մայրենի, այնպես էլ էստոներեն (պետական) լեզվից: Իմերսիոն ծրագրերի համաձայն, առարկաների առնվազն 50%-ը դասավանդվում է էստոներեն լեզվով: Իմերսիան պատկանում է ինտեգրված ուսուցմանը և հիմնվում է սկզբունքին՝ մեկ ուսուցիչ մեկ լեզվի համար (Keele-kümbleskeskus: kümne aasta jagu kogemusi. Language Immersion Centre: Ten Years of Accomplishment,2010): Իմերսիոն ծրագրերը տարածվում են ինչպես նախադպրոցական դաստիարակության հաստատությունների, այնպես էլ հանրային դպրոցների վրա: Այսպիսով, էստոնիայում կիրառվում են վաղ և ուշ իմերսիայի լրիվ և մասնակի ձևեր: Արդեն առկա են ուսուցման այս մեթոդաբանության դրական արդյունքները (տեսեք՝ Իմերսիայի գիտական հետազոտությունները և արդյունքները՝ 2001-2009. http://www.kke.ee/index.php?lang=est&pages_ID=46&menus_ID=1&active_link_ID=55&mark=0). Իմերսիոն ծրագրերի դրական արդյունքների մասին է խոսում այն, որ էստոնիայում ռուսալեզու դպրոցների և մանկապարտեզների կեսը կամավոր միացավ կրթության տվյալ ծրագրին:

1997 թվականին գոյություն ունեցած «Հիմնական և միջնակարգ դպրոցները Էստոնիայում» օրենքին ավելացավ նոր կետ, որի համաձայն ռուսական դպրոցները

փուլերով սկսեցին անցնել էստոներեն լեզվի, որպես ուսուցման լեզվի, օգտագործման միջնակարգ դպրոցի աստիճանում, որը պետք է ավարտվեր մինչև 2007 թվականի սեպտեմբերի 1-ը:

Աշակերտները, որոնք սկսել են սովորել միջնակարգ դպրոցում 2011 թվականին սովորում են որոշակի առարկաներ էստոներեն լեզվով: Ազգային ուսումնական պլանի համաձայն, պարտադիր առարկաների 60%-ը դասավանդվում է էստոներեն: Նման «տրանզիցիայի» նպատակն է, որ յուրաքանչյուր ռուսալեզու աշակերտ, դպրոցն ավարտելուց հետո կարողանա շարունակել ուսումը և աշխատանքային շուկայում լինել մրցունակ պետական լեզվից՝ իր բարձր լեզվական իրազեկության շնորհիվ: Ռուսալեզու աշակերտների նկատմամբ նման մոտեցումը նպատակադրում է էստոնացի և ռուսալեզու աշակերտների համար հավասար լեզվական հնարավորությունների զարգացում, ինչը նրանց կօգնի լինել մրցունակ և ինտեգրված ցանկացած բնագավառում, լինի սա աշխատանք, ուսում թե այլ հասարակական գործունեություն: Ուսուցման այսպիսի օրինակին անցնելը դպրոցների միջնակարգ աստիճանում տեղի ունեցավ փուլերով, յուրաքանչյուր ուսումնական տարի տեղի է ունենում փուլերով նոր առարկաների ավելացում էստոներեն լեզվով: Ընթացիկ 2010/2011 ուսումնական տարում միջնակարգ աստիճանի առաջին տարում առնվազն 4 առարկա էր պարտադիր էստոներեն լեզվով: Էստոնական գրականությունը, Էստոնիայի պատմությունը, սոցիալական գիտությունները և երաժշտությունը պարտադիր պետք է դասավանդվեն էստոներեն լեզվով (2007 թվականի նոյեմբերի 23-ին կառավարության կողմից ընդունվեց նման կարգավորում «ԵՅՅԵՅ»- (305):

Այսօրվա դրությամբ Կրթության և հետազոտման նախարարության տվյալների համաձայն, միջնակարգ աստիճանում դպրոցների 90%-ում 4 կամ ավելի առարկա է դասավանդվում էստոներեն, միննույն ժամանակ, յուրաքանչյուր դպրոց աշխատում է առարկաների 60%-ը դասավանդել լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցման մեթոդով: Մինչև օրս քննարկման առարկա է մնում, թե ինչ է ենթադրվում «լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցման մեջ»: Վիճում են, թե պետք է նկատի ունենանք արդյոք աշակերտների լեզվի տիրապետման մակարդակը մայրենի լեզվից և նրանց տարիքը:

Վերջին տարիների հետազոտման գլխավոր առարկա է հանդիսանում ռուսալեզու աշակերտների և ուսուցիչների վերաբերմունքը՝ կապված կրթության բնագավառում ընթացող փոփոխությունների հետ: Հետազոտման նախնական արդյունքները ցույց են տվել (2009), որ մենք կանգնած ենք խաչմերուկում՝ աշակերտների և ուսուցիչների մեծ քանակություն ղեկավարում է արտահայտում փոփոխությունների նկատմամբ, չնայած նրան, որ գործընթացները դեռ ավարտված չեն, և վերջնական արդյունք գոյություն չունի: Շատ մեծ է տարբերությունը Հյուսիսային Էստոնիայի, որին սահմանակցում են ռուսալեզու երկրներ, և Տալլինի և Էստոնիայի այլ տարածաշրջանների միջև: Ինչպես հետազոտություններն են ցույց տվել, աշակերտների մեծամասնությունը ցանկություն է արտահայտում անգլերենի ուսուցման նկատմամբ, սակայն դրական արդյունք կարելի է համարել աշակերտների կողմից մեծացած հետաքրքրությունը Էստոնիայում միջնակարգ մասնագիտական ինստիտուտներում և համալսարաններում սովորելու նկատմամբ, ինչն անպայման պահանջում է էստոներեն լեզվի տիրապետում: Ուսուցման

մեթոդաբանությունը և աշակերտների պատճառաբանվածությունը կրկին մնում է որպես պրոբլեմային հարց: Ուսուցիչները մինչև վերջ իրազեկ չեն երկրորդ լեզվով ուսուցման մեթոդաբանության հարցերում: Ուսուցիչների միայն մեկ երրորդն է համարվում որակյալ էստոներեն տարբեր առարկաների դասավանդման մեջ: Չնայած դրան, նրանց մեծ մասն ինքն է արտահայտում ղեկավարություն աշակերտների կողմից ցածր պատճառաբանվածության գոյության պատճառով: Իրենց հերթին աշակերտներն արտահայտում են ղեկավարություն, որ դասերը հոգնեցուցիչ են և անհետաքրքիր:

(Masso, I. & Kello, K., 2010): Այս փաստը հավաստեցին OECD-ի շրջանակներում անցկացված TALIS (2007/2008) հետազոտությունները, որոնք ցույց են տալիս, որ չնայած նրան, որ աշակերտներն Էստոնիայում ավելի ժամանակակից են և լիբերալ այլ երկրների համեմատ, ուսումնական փորձը պահպանված է ավանդական ձևով: (Loogma, K., Ruus, V-R., Talts, L & Poom-Valickis, K., 2009): Ցավոք, գոյություն չունեն անմիջապես դասի գործընթացի դիտարկման և նրա արդյունքներն արտացոլող հետազոտություններ:

Իմերսիոն ծրագրով էստոներեն լեզվի ուսուցումը մանկապարտեզներում աստիճանաբար դրական տեսք է ընդունում և ընդունելի է դառնում ժողովրդի մեծ մասի համար: Իսկ պետական լեզու սովորելու ամենից մեծ անհրաժեշտություն դպրոցներում կա երրորդ աստիճանում 13-15 տարեկան դեռահասների մեջ: Էստոներեն լեզվի հասկանալը և կիրառելը ուսուցման գործընթացում ավելի ցածր մակարդակի վրա է դպրոցի տարրական աստիճանում, թեպետ հենց այս շրջանում է հիմնական աստիճանի աշակերտների մոտ տեղի ունենում ընտելացումը և պատրաստումը ոչ մայրենի լեզվի ավելի ինտենսիվ օգտագործման համար: Պետական

լեզուն սովորելը էստոնիայում 2009 թվականից դարձավ պարտադիր ինչպես պետական դպրոցներում, այնպես էլ ռուսալեզու մանկապարտեզներում երեք տարեկան հասակից: (Ազգային ուսումնական պլան նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար, 2008): Արդյունքները, որ արդեն նվաճված են, հստակ խոսում են այն մասին, որ գործընթացները սկսված են: Մանկապարտեզներն ունեն ուսուցման համար անհրաժեշտ նյութեր: Ոչ էստոնալեզու դպրոցների մեծ մասում տարբեր առարկաների ուսուցումը էստոներեն լեզվով արդեն զանգվածային բնույթ ունի:

Կրթության և հետազոտության նախարարության տվյալների համաձայն, այսօրվա դրությամբ երկրի մասշտաբով գոյություն ունեցած փոքրամասնությունների դպրոցների երեք չորրորդն ընդգրկված է տվյալ գործընթացների մեջ: Դպրոցների մեծ մասում էստոներեն սովորելու առարկաներն են՝ ֆիզիկական դաստիարակությունը, արվեստը և երաժշտությունը: Քաղաք Տալլինը, որտեղ գտնվում է ռուսական դպրոցների 40%-ը, զարգացրել է ուսուցման իր մոդելը, որի համաձայն ուսուցման նախնական աստիճանում առարկաների 22%-ը դասավանդվում է էստոներեն և հետագայում ուսումնական առարկաների այս քանակն աստիճանաբար ավելանում է մինչև 34%-ը: Դպրոցի տարրական աստիճանում 7-8 տարեկան երեխաները էստոներենը սովորում են, որպես երկրորդ լեզու, զուգահեռաբար որոշակի առարկաներ, ինչպիսիք են հումանիտար գիտությունները, երաժշտությունը և ֆիզիկական դաստիարակությունը ընթանում են էստոներեն լեզվով: Բնագիտական առարկաները և քաղաքացիական կրթությունն էստոներեն սովորելու առարկաների ցանկին են ավելանում

հաջորդ աստիճանում՝ 10-12 տարեկան աշակերտների մոտ: Ձեռքի հմտությունը և կամընտրական առարկաներից մեկն ավելանում է արդեն 15 տարեկան աշակերտների համար (Երաշխավորված դասեր, պլանի մաս Տալլինի մոդելի համար 2011):

Պետք է նշել, որ հիմնական և միջնակարգ աստիճանում պետական լեզվի ուսուցումը շաբաթվա ընթացքում սահմանվում է առնվազն 6-ից մինչև 12 ժամ, որտեղ էստոներեն լեզվի ուսուցումը սկսվում է դպրոցի տարրական աստիճանից և աստիճանաբար խորացվում է յուրաքանչյուր հաջորդ աստիճանում և առանձնապես պարտադիր է դառնում հիմնական և բազային աստիճաններում 10-ից մինչև 15 տարեկան աշակերտների մոտ (Ազգային ուսումնական պլաններ հիմնական և միջնակարգ աստիճանների համար, 2010): Բազային աստիճանի ավարտական քննությունները պահանջում են պետական լեզվի իմացություն B1 մակարդակով, որը համապատասխանում է եվրոպական լեզվի իմացության մակարդակի չափորոշչին, նույն տիպի քննությունները դպրոցի ավարտական աստիճանում աշակերտին պարտավորեցնում են պետական լեզվի տիրապետում B2 մակարդակով: Անկախ նրանից, որ շատ մեծ է փորձը ցանկացած աստիճանում պետական լեզվի ուսուցման, պետք է նշել, որ սպասումները և պահանջները անհամեմատ բարձր են, քան հետազոտությունների արդյունքում ստացած գործնական արդյունքը: (Vare, S., 2006).

Ցավոք, ռուսալեզու աշակերտների ակադեմիական առաջադիմության մակարդակը դեռ անհրաժեշտ մակարդակի վրա չէ՝ էստոնալեզու աշակերտների համեմատ: Սրանք արդյունքներ են, որոնց վրա հիմնվելով արվել է տվյալ եզրակացությունը 2006, 2009 թվականներին OECD PISA-ի անցկացված

հետազոտության զեկուցման մեջ, որի համաձայն ռուսալեզու դպրոցների աշակերտները ցածր մակարդակ են ցուցաբերել էստոնացի աշակերտների համեմատ, չնայած նրան, որ վերջին տարիների ակտիվ բարեփոխումների հետևանքով նրանց կողմից պետական լեզվի տիրապետման մակարդակը զգալիորեն բարելավվել է, առանձնապես գործնական ընթերցանությունից: Ռուսալեզու աշակերտների արդյունքները մոտավորապես 40 անգամ ցածր են էստոնացի աշակերտների արդյունքների համեմատ՝ կարդալու կարողության տեսակետից, թեպետ սա ոչ էլ զարմանալի է, քանի որ 15 տարեկան աշակերտները դեռ չեն սովորում առարկան էստոներեն, ի տարբերություն իրենց էստոնալեզու հասակակիցների, ինչը անմիջականորեն արտացոլվում է պետական լեզվի իմացության տեսակետից նրանց պակաս զարգացած կարողությունների վրա:

Ներկայիս պետական քննությունների համաձայն (2002 թվականից), ռուսալեզու աշակերտների ակադեմիական արդյունքներն ավելի ցածր են, նրանց էստոնացի հասակակիցների համեմատ, առավելապես պատմությունից, քաղաքացիական կրթությունից, աշխարհագրությունից և օտար լեզուներից: Թեպետ համարյա հավասար են արդյունքները այն դպրոցների աշակերտների, որոնք հենց սկզբից են միացել ընթացիկ բարեփոխումներին և որտեղ համամետաբար երկար ժամանակ առարկաների որոշակի խմբի ուսուցումն ընթանում է էստոներեն լեզվով (Käosaar, I, 2010): Ռուսական դպրոցների տնօրենները զլմ-ների միջոցով փորձում են ժողովրդի ուշադրությունը կենտրոնացնել մի անչափ նշանակալի փաստի վրա, որ հեռանկար ունեցող և ընդունակ ոչ էստոնալեզու աշակերտների մեծ մասը գնում է էստոնական դպրոցներ, ռուսալեզու

դպրոցներում նշված ցածր արդյունքների պատճառներից մեկը կարող է նաև սա համարվել (Õpetajate Leht (Teachers' Newspaper), 14 January, 2011, 2):

Ընթացիկ գործընթացները նրա ապացույցն են, որ ժամանակակից էստոնիայում ռուսալեզու դպրոցներին մեծ ուշադրություն է դարձվում, չնայած նրան, որ դեռ վաղ է արդյունքների մասին խոսելը: Էստոնիայի հարևանությամբ գտնվող երկիրը՝ Լատվիան, 2004 թվականի կատարել է դպրոցների անցում լատվիերեն լեզվի: Թեպետ այս գործընթացը տեղի չի ունեցել այնպես քայլ-քայլ, ինչպես Էստոնիայում: (Papule, E., 2010): Ուշագրավ է այն մեծ պատճառաբանվածությունը, որ գոյություն ունի Լատվիայում էթնիկական փոքրամասնությունների կրթության ուղղությամբ:

Ուսուցման բարձր որակը, որ այսօր կա դպրոցում, իր ազդեցությունն է ունենում աշակերտների քանակի վրա: Այսօրվա տվյալներով 1500 աշակերտ է ավարտել ռուսալեզու դպրոցների 10 դասարան: Կրթության և հետազոտման նախարարության տվյալների համաձայն, քանակը, 2005 թվականի համեմատ, կրճատվել է 50%-ով, այն դեպքում, երբ էստոնական դպրոցներում 20%-ից մի քիչ էլ ավել է: Այս արդյունքները կարող են հարուցված լինել աշխարհագրական պատճառներով ևս, նաև նրանց ապագա ընտրությամբ, ինչը կայանում է հետևյալում՝ վերջին տարիներին աշակերտների բավականին մեծ քանակ գերադասում է ուսումը շարունակել մասնագիտական ուսումնական հաստատություններում: Այս տվյալները ռուսալեզու դպրոցների համար կազմում է 39%, իսկ էստոնալեզու դպրոցների համար՝ 28%: Աշակերտների որոշակի քանակ խուսափում է բարեփոխումների հետևանքով ստեղծված փոփոխություններից և սթրեսից, որ կշարունակվի ապագա մի քանի տարում ևս,

և որը նպատակադրում է ինտերառարկայական ինտեգրում և ընդհանուր կարողությունների զարգացում միջազգային մասշտաբով:

Ընթացող մեծ փոփոխությունների գործընթացում կարևոր է, որ ինչպես դպրոցների, այնպես էլ պետության կողմից ուշադրություն դարձվի մայրենի լեզվի պահպանմանը և զարգացմանը: Նշանակալի է ռուսալեզու ուսուցիչների դերն իրենց լեզվի և մշակույթի պահպանման գործում, ինչպես նաև այն ուսուցիչների դերը, որոնց համար ռուսերենը մայրենի լեզու չէ, թեպետ տարբեր առարկաներ են դասավանդում ռուսերեն:

Միննույն ժամանակ էստոնիան կանգնած է ևս մեկ մարտահրավերի առջև՝ ուսուցիչների կարողությունները էստոներեն լեզվից: Ուսուցիչների մեկ տասներորդ մասը ռուսալեզու դպրոցներում էստոնացիներ են և նրանցից մեկ երրորդի կարողությունները էստոներեն լեզվից չեն համապատասխանում B2 մակարդակին, որը պարտադիր է ոչ էստոնացի ուսուցիչների համար, որպեսզի աշխատեն դպրոցում (Կրթության և գիտության հետազոտման վիճակագրություն, 2011, տեսեք նաև՝ Masso, I. & Kello, K., 2010): Իսկ սա խնդիր է ստեղծում դպրոցներում երկլեզու կրթության իրականացման համար: Հետագայում անհրաժեշտ են ուսուցիչների վարժանքներ և ժամանակակից ուսումնական նյութերի մատչելիության ապահովում՝ նրանց համապատասխան կարողությունների զարգացման հետևանքով: Ռուսալեզու ուսուցիչների համար վարժանքներ առարկայի ուսուցման ուղղությամբ՝ սա այն հարցն է, որի մասին դատողությունները սկսվել են դեռ մեկ տասնամյակ առաջ: (Vassiltšenko, Asser, Tras-

berg, 1998): Քննարկման մասնակիցները շեշտադրությունն անում էին ուսուցչի կողմից լեզվի ազատ տիրապետման և ուսումնական մեթոդների հարցերի վրա ռուսաց լեզվից (որպես մայրենի լեզու), նաև ուսուցիչների կողմից էստոնական մշակույթին մերձենալու կարողության զարգացման վրա:

Ցավոք, բավական չեն այն վարժանքները, որ անց են կացվում այս ուղղությամբ: Բավական ուշադրություն չի դարձվում այն առարկաներին, որոնք կարևոր են բազմամշակույթ ուսուցման համար: Այսօր էստոնիայում համարյա բոլոր ուսուցիչներն ունեն վարժանքի կարիք լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցման մեթոդիկայից: Կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն ուսուցիչներին, որոնք դասավանդում են ինչպես ռուսերեն, այնպես էլ էստոներեն: Լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցումը նշանակալի է առանձնապես դպրոցի հիմնական աստիճանում ճշգրիտ և բնագիտական առարկաներից:

Մինչև օրս երկլեզու կրթություն կար հիմնականում միայն ռուսաց դպրոցներում, այժմ իրավիճակը փոխվում է: 2010 թվականի Ազգային ուսումնական պլանը բոլորին միանման պարտավորեցնում է դպրոցում ստեղծել բազմամշակույթ ուսումնական գործընթաց և կիրառել լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցում: Միջազգային հետազոտությունները ցույց են տվել, որ բոլոր դպրոցներին միանման հաջողություն կարող է բերել բազմամշակույթ միջավայրի ստեղծումը դասի գործընթացում և լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցումը (Loogma, K., Ruus, V-R., Talts, L & Poom-Valickis, K., 2009):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Էստոնիայի ուսուցիչների կրթության ռազմավարություն 2009-2013 թվականների համար
In: <http://www.hm.ee/index.php?0511752>. 20.02.2011.
- Keelekümblyuse teadusuuringud 2001-2009 (Language Immersion Scientific Researches 2001-2009) In: http://www.kke.ee/index.php?lang=est&pages_ID=46&menus_ID=1&active_link_ID=55&mark=0. 18.02.2011.
- Keelekümblyuskeskus: kümne aasta jagu kogemusi. Language Immersion Centre: Ten Years of Accomplishment. Центрыязыковогопогружения: результатыдесятилетнейработы, 2010. Tallinn: Integratsiooni Sihtasutus, Haridus- ja Teadusministeerium.
- Koolieelse lasteasutuse riiklik õppekava 2008 (National Curriculum for Preschool Children's Institution, 2008). In: <https://www.riigiteataja.ee/akt/13351772-20.02.2011>. 20.02.2011.
- Կենսաար- Kāosaar, I., 2010. Uue õppeaasta eel. Ettekanne Pärnus 15.09.2010. (Before the Beginning of a New Academic Year). Unpublished *manuscript in possession of the author*
- Լոոգմա - Loogma, K., Ruus, V-R., Talts, L. & Pool-Valickis, K., 2009. Õpetaja professionaalsus ning tõhusama õpetamis- ja õppimiskeskkonna loomine. OECD rahvusvahelise õpetamise ja õppimise uuringu TALIS tulemused. (Teacher's Professionalism and Creation of More Effective Teaching and Learning Environment. Results of OECD International Survey in Teaching and Learning TALIS). Tallinn: Tallinna Ülikooli haridusuuringute keskus.
- Մասնիկ Կելլո - Masso, I. & Kello, K., 2010. Vene õppekeelega koolide valmisolek eestikeelsele gümnaasiumiõppele üleminekuks (Readiness of Russian Medium Schools for Transfer to Upper-Secondary School Studies in Estonian Language.) In: <http://www.hm.ee/index.php?048181>. 20.02.2011.
- Պիտեր Մեհիստ, Դավիդ Մարշ - Peeter Mehisto, David Marsh, Maria Jesus Frigols Martin, Kai Völli, Hiie Asser. 2008. Lõimitud aine- ja keeleõpe (Uncovering CLIL). Tallinn: Iduleht,
- Պապուլե - Papule, E., 2010. Образованиенациональныхменьшинств: опытЛатвии. Education of National Minorities: Latvian Experience. / Presentation at the Estonian Ministry of Education and Research. Unpublished *manuscript in possession of the author*.
- Պիզա - PISA 2009 – Eesti tulemused. Eesti 15-aastaste õpilaste teadimised ja oskused funtsionaalses lugemises, matemaatikas ja loodusteadustes. Koostanud Tire, G., Puksand, H., Henno, I. & Lepmann, T. (PISA 2009 – Estonia's Results. Estonian 15-year-old Pupils' Knowledge and Skills in Functional Reading, Mathematics and Nature Science). Tallinn: Haridus- ja Teadusministeerium. In: - http://uuringud.ekk.edu.ee/fileadmin/user_upload/documents/PISA_2009_Eesti.pdf. 20.02.2011.
- Քõhikooli ja gümnaasiumi riiklikud õppekavad, 2010. See in Russian translation: Государственные программы обучения для основной школы и гимназии, 2010. In: <http://www.hm.ee/index.php?2511432>. 18.02.2011.
- Պետական ինտեգրման ծրագիր 2008-2013 թվականների համար: In: <http://estonia.eu/about-estonia/society/integration-in-estonian-society.html>. 20.02.2011.
- Tallinna mudeli soovituslik tunnijaotusplaan, 2011 (Recommended Lesson Division Plan of Tallinn Model, 2011). Unpublished *manuscript in possession of the author*.
- Վարե - Vare, S., 2006. Vene koolide valmisolekust üleminekuks eesti õppekeelega gümnaasiumile 2007. aastal. (About Readiness of Russian Schools for Transition to Estonian-medium Secondary School in 2007). Eesti Rakenduslingvistika Ühingu aastaraamat 2, 303-326.
- Vassiltšenko, L., Hasser, H. & Trasberg, K., 1998. Muukeelne haridus ja õpetajakoolitus (Education acquired in a language other than Estonian and teacher training). Haridus 1998, 6, 10-14.
- Õpetaja V kutsestandard, 2005. Koostanud ja kinnitanud hariduse kutsenõukogu (Teacher's Professional Standard V, 2005. Compiled and adopted by Education Professional Council). In: <http://www.hm.ee/index.php?044930>. 18.02.2011.
- Õpetajate Leht. Teachers' Newspaper. 14 January, 2011, 2.

Raik, Katri

PhD, DoctorPhilosophiae (History)

Director Narva College of the University of Tartu (Narva, Estonia)

BILINGUAL EDUCATION DEVELOPMENTS IN GENERAL EDUCATION: ESTONIA'S EXPERIENCE

ABSTRACT

In today's Estonia the main language of instruction in general education is the state language, Estonian; at the same time around one of fifth of general education is Russian-medium. Besides the Russian language, English, French, German, and Finish are also used as the language of instruction along with the state language in general education of Estonia.

In today's according to data of the Ministry of Education and Research, in 90% of secondary schools more than four subjects are taught in Estonian language. Meanwhile, single secondary schools reach 60% rate of Estonian-medium content/subject instruction.

In the course of big changes it's important for both the state and schools to be able to pay attention to preserving the mother tongue and culture of each nations. Although up to today bilingual education in Estonia has mostly been the territory of the Russian-medium school, the situation is now changing. The new, adopted in 2010, National Curricula value multiculturalism and content and language integrated learning. Results of international researches show that learning in the multicultural environment is significantly underestimated in schools.